

Ներածություն

Սպառողների լայն շրջանին ուղղված վիճակագրական սույն ժողովածուում արտացոլվել է հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսության գործունեությունը բնութագրող ամփոփ տվյալների դինամիկան և 2009թ. վիճակագրական ցուցանիշների քանակական վերլուծությունը: Իրավիճակի արտացոլման ցուցանիշների ընտրությունը կատարվել է՝ ելնելով միջազգային համադրելիության ապահովման անհրաժեշտությունից, ինչպես նաև ներքին սպառողների պահանջներից:

Ժողովածուի կազմման համար հիմք են ծառայել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից հավաքագրված վիճակագրական տվյալները, հանրապետության մի շարք նախարարությունների ու գերատեսչությունների, մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանցում գործող վարչական ռեզիստրների, ինչպես նաև կազմակերպությունների ամփոփ տվյալները: Վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների շրջանակը որոշվել է համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ՝ հիմք ընդունելով իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանի և գերատեսչական մարմինների վարչական ռեզիստրների տվյալները:

Ժողովածուում ներառված են հետևյալ բաժինները. բնակարանային ֆոնդ, բնակապահովվածություն, անշարժ գույքի շուկա, բնակչության և կոմունալ տնտեսության ջրամատակարարում, գազաֆիկացում, քաղաքային համայնքների սանիտարական մաքրում ու բարեկարգվածություն, քաղաքային հողեր ու կանաչապատ տարածքներ և այլն: Բաժիններն ավարտվում են հիմնական ցուցանիշների վիճակագրական դինամիկ շարքերով:

ՀՀ ԱՎԾ-ն իր երախտագիտությունն է հայտնում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի կադաստրային գնահատման բաժնի պետ Ա. Պետրոսյանին և գլխավոր մասնագետ Ա. Ավագյանին՝ խորհրդատվական ծառայությունների և առանձին բաժինների խմբագրական աշխատանքների համար:

Հուսով ենք, ժողովածուն կարող է տեղեկատվական հիմք հանդիսանալ սոցիալ-տնտեսական քաղաքականություն մշակողների և այն իրականացնողների, գիտակրթական գործունեությամբ զբաղվողների և վերլուծաբանների, ինչպես նաև հանրության լայն շրջանների համար:

Ժողովածուն պատրաստել է ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի բնակարանային ֆոնդի և կոմունալ տնտեսության վիճակագրության խումբը:

Պայմանական նշաններ

երևույթը բացակայում է	—
վիճակագրական տվյալներ չկան	...
չնչին մեծություն	0.0